ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/34

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.01.2020թ. թիվ 26/26-1/1077-2020 գրությամբ «Կարեն օիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության զորքերի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 29.01.2020թ. թիվ 3/4/2274-20 գրության հիման, վրա 30.01.2020թ. թիվ 26/26-1/1077-2020 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Կարեն օիլ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Կարեն օիլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Կարեն օիլ» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/34 ընթացակարգի շրջանակներում 07.02.2020թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ ոստիկանության զորքերի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանության զորքերը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.01.2020թ. թիվ 3/4/2274-20 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության զորքերի և «Կարեն օիլ» ՍՊԸ-ի միջև 24.07.2019թ. կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-19/6/Բ/6/ՎՔՆ-76» ծածկագրով շարժիչի յուղի գնման պայմանագրի շրջանակներում «Կարեն օիլ» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն խնդրել է միջոցներ ձեռնարկել Ընկերությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/34 ընթացակարգի շրջանակներում 07.02.2020թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/34 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/34 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության զորքերի և «Կարեն օիլ» ՍՊԸ-ի միջև 24.07.2019թ. կնքվել է թիվ «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-19/6/Բ/6/ՎՔՆ-76» ծածկագրով վառելիքաքսուկային մատակարարման գնման պայմանագիր (հետայսու՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված վառելիքաքսուքային նյութերը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պատվիրատուի կողմից 21.01.2020թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-19/6/Բ/6/ՎՔՆ-76» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.01.2020թ. թիվ 26/26-1/1077-2020թ. գրությունը, ՀՀ ոստիկանության զորքերրի 29.01.2020թ. թիվ 3/4/2274-20 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ ոստիկանության զորքերի և «Կարեն օիլ» ՍՊԸ-ի միջև 24.07.2019թ. կնքվել է թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-19/6/Բ/6/ՎՔՆ-76» ծածկագրով վառելիքաքսուկային մատակարարման գնման պայմանագիր (հետայսու՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված վառելիքաքսուքային նյութերը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի գինը սահմանվել է 935.000 ՀՀ դրամ:

Պայմանագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1000 լիտր «Շարժիչի յուղ՝ SAE 15W 40» ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 2019թ. 3-րդ եռամսյակը, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 20 օրացույցիային օրից:

ՀՀ ոստիկանության զորքերն Ընկերությանն ուղղված 21.01.2020թ. թիվ 4/68 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ոստիկանության զորքերի և «Կարեն օիլ» ՍՊԸ-ի միջև 24.07.2019թ. կնքվել է թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-19/6/Բ/6/ՎՔՆ-76» ծածկագրով շարժիչի յուղի գնման պայմանագիր, որի շրջանակներում Ընկերությունը ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի, մատակարարը պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան պետք է մատակարարեր 1000 լիտր «Շարժիչի յուղ՝ SAE 15W 40» ապրանքը, սակայն ընդհանրապես չի մատակարարել:

Ամփոփելով՝ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը և Պայմանագրի 2.1.7-րդ կետը՝ ՀՀ ոստիկանության զորքերը 2019թ. դեկտեմբերի 30-ին միակողմանի լուծել է թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-19/6/Բ/6/ՎՔՆ-76» պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից 21.01.2020թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-19/6/Բ/6/ՎՔՆ-76» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն վաճառող կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>15 օրից ավելի,</u>

Այսպիսով՝ «Կարեն օիլ» ՍՊԸ-ն իր և ՀՀ ոստիկանության զորքերի միջև 24.07.2019թ. կնքված պայմանագրով ստանձնել է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում, այն է՝ 2019թ. 3-րդ եռամսյակը, բայց ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 20 օրացույցային օրից, ՀՀ ոստիկանության զորքերին 1000 լիտր «Շարժիչի յուղ՝ SAE 15W 40» ապրանք մատակարարելու պարտականությունը: Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին ծանուցման համաձայն՝ Ընկերությունը չի կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունն ամբողջ ծավալով և պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ՝ 30.12.2019թ., չի մատակարարել 1000 լիտր «Շարժիչի յուղ՝ SAE 15W 40» ապրանք և ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի: Այսինքն՝ Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.01.2020թ. թիվ 26/26-1/1077-2020 գրությամբ «Կարեն օիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Կարեն օիլ» ՍՊԸ-ին ընդգրկել

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**